ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 347 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 156-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակեր–պության (ՀՎՀՀ՝ 00904586) կողմից կնքված՝ ստորև նշված եռակողմ պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրա-պետության փոխվարչապետի 2023 թվականի մարտի 2-ի «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հենաշարժողական խնդիրներ ունեցող վիրավոր զինվորների համար հարմարեցված տների կառուցում» ծրագրի մասին» N156-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստան» համահայկական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02507456) և «ԲԻԴԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00450801) հետ 2025 թվականի մայիսի 8-ին կնքված՝ N ՀՀ/ՋՏ-01/25 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Բալահովիտ բնակավայրում 8 բնակելի տների կառուցման

շինարարական աշխատանքների իրականացում՝ 288,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստան» համահայկական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02507456) և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 08417251) հետ 2025 թվականի մայիսի 8-ին կնքված՝ N ՀՀ/ՏՀ-03/25 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Բալահովիտ բնակավայրում 8 բնակելի տների կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 2,880,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

04.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ